Պապյան Ս. - «Սփյուռքահայերը Հայաստանում արդարություն են ուզում տեսնել».
Արամ Իսաբեկյան - «1in.am», 19.09.2014

«Առաջին լրատվական» -ը զրուցել է Երևանի Գեղարվեստի Պետական Ակադեմիայի Ռեկտոր Արամ Իսաբեկյանի հետ:

–Պարոն Իսաբեկյան, ի՞նչ եք կարծում,արդյոք նման համաժողովները ամրապնդում են հայրենիք–սփյուռք կապը:

-Ես կարծում եմ՝ քանի Սփյուռքը գոյություն ունի, այս ամեն ինչը, ինչ-որ կատարվում է, իմաստ ունի և շատ լավ է, որ կան այս հանդիպումները, այս համաժողովները: Կարծում եմ, քանի գնա, այնքան թափ կառնի: Ընդհանրապես, շփումները շատ կարևոր են: Մեր ազգի առաջ կյանքի-մահվան հարցեր կան, և կարող եմ ասել, որ առանց Սփյուռքի հնարավոր չէ այդ հարցերը լուծել:

–Այնուամենայնիվ, ի՞նչ է Սփյուռքը Հայաստանի համար և ի՞նչ է Հայաստանը Սփյուռքի համար: Տեսակետ կա, որ սփյուռքահայերը Հայաստանի ներքաղաքական կյանքով այդպես էլ չապրեցին:

–Ես չեմ կիսում այդ կարծիքը: Ի՞նչ է նշանակում չապրեցին; Բոլորն էլ ապրում են: Եթե մարդիկ ունեն բարեկամներ, կամ մարդիկ, որոնց հետ շփվում են, կտեսնեն, թե մարդիկ ինչ մեծ ցավ են ապրում և ինչ մեծ ուրախություն են ապրում մեր ամենօրյա կյանքով: Ուրիշ բան, որ այստեղ չեն ապրում, մենք էլ այնտեղ չենք ապրում: Դժբախտության պատճառով է առաջացել մեր Սփյուռքը, բայց շատ քիչ ժողովուրդներ ունեն այդ տեսակի, այդ մակարդակի սփյուռք: Հրեաներն ունեն, իտալացիները ունեն:

–Բայց հրեաները համագործակցում են իրար հետ, մեկտեղում են նաև մշակութային կապերը:

–Ես չեմ կարծում, որ հայ սփյուռքը չի մասնակցում մեր կյանքին: Երբեք նման բան մտքովս չի անցել: Գիտեք, նրանք էլ սպասում են, որ ամեն ինչ արդար լինի Հայաստանում, արդարություն են ուզում տեսնել, մեծ ցանկություն ունեն մեր ժողովրդին տեսնել բարվոք սոցիալական վիճակի մեջ:

https://youtu.be/Tk6EcjmwWpQ

https://www.1in.am/1432655.html